



## 26. ԵՐԱԶ ՏԵՆՈՂ ԱՇԿԵՐՏԸ

Ավալ ժամանակին ըլնում ա շինում մի բեղրգյան։ Էս բեղրգյանը մի մինումար տղա ա ունենում, էլ զադ չէ։ Խնքն էլ շատ ծերացած ա ըլնում, ընենց որ հայ-հայը գնացե, վայ-վայն էր մնացե։ Օրեն մի օրը կանշում ա իրա բարեկամներին։

— Տենում եք,— ասում ա,— ես ծերացել եմ, դեն ընկե. տղես էլ հլա էրեխա ա, աշխարի խերն ու շառը չի գիտա. ձեզանից մենակ խնդիրքս էս ա, որ իմ մեռնելուց եղը ինչ ունեմ-շունեմ՝ տո՛ւն, տե՛ղ, մա՛լ, դո՛լվաթ, քոմմա ծախեք, նազդ փող շինեք, կշտներիդ պահեք, շահացնեք ընշանք տղիս մենծանալը։ Որ մենծացավ,— ասում ա,— կտանեք նրան մի փեշակի կտաք, որ պարապ-սարապ շմանգա։

Անց ա կենում մի քանի վախտ, էս բեղրգյանը հիվանդանում ա, տեղով-բարձով թեք ընկնում, էլ չի վե կենում։ տղի շարը տանում ա։ Բարեկամները, ոնց որ կարգն էր, տանում են դրան թաղում։ Ենան բերում են, ոնց որ կտակն էր<sup>1</sup>, դրա ունեցած-շունեցածը քոմմա ծախում են, նազդ փող շինում, կշտներին շա-

<sup>1</sup> Տպագիր տեքստում այս արտահայտությունը եղել է «...ոնց որ վասիար էր արե», ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

Հացնում: Տղեն էլ որ դառնում ա տասը-տասնէրկու տարսեկան, ասում են, «Տանենք մի փեշակի տանք»: Դրան աղաք են անում, տանում բազար՝ է՛ս փեշաքյարի կուշտը, է՛ն փեշաքյարի կուշտը, դե՛ս են էթում, դե՛ն են էթում, մախլաս, որ շատ ման են զալի, ծանդր ու թեթև են անում, տալիս են թագավորի զարգյարի կուշտը աշկերտ:

Էս տղեն ա՝ առավոտները զշերով-զշերհանա վեր ա կենում էթում զարգյարի դուքանը, իրիկները՝ մըղողը կոխելիս թողում ա զալի տուն:

Ըսենց անց ա կենում մի վախտ՝ մի օր, էրկու օր, իրեք օր, մի շարաթ, մախլասի՝ մի ամիս, օրեն մի օրը թագավորը կանչում ա էդ զարգյարին իրա կուշտը: Զարգյարը գալիս ա թագավորին զլուխ տալի, ընդե կաննում:

— Ո՛ւստա, — ասում ա թագավորը, — առ էս տասը ոսկին ու էս էրկու անգին քարը. կտանես ինձ հմար էրկու լավ մատանիք կշինես, կրերես. մի շարաթ էլ քեզ վագա եմ տալի:

— Աշքիս վրա, — ասում ա զարգյարը:

Թագավորին զլուխ ա տալի, ոսկիքն ու անգին քարերը վեր ունում, զուս գալի:

Էթում ա զուքան, ոսկիքն ու անգին քարերը զնում գաղղյահի վրեն, աշկերտին թամբահ ա անում, որ մուղաթ կենա ու ինքը վե կենում, էթում տուն, ասում ա. ոՀաց ուտեմ պրծնեմ, եննա կգամ կշինեմ: Լա՛վք:

Էս աշկերտն ա՝ ուստեն ուտը շեմքիցը դուս ա զնում թե չէ՝ զլուխը զնում ա զաղղյահին, անսաս քնում:

Սատանական հենց էդ վախտը թագավորը իրա նազիր-վեզրի հեննա դարվշի գելմ մտած, գալիս ա ըտերանք ման գալու տենա ի՛նչ կա, ի՛նչ չկա: Էդ զարգյարի դուքանի կշտովը անցկենալիս, վարավուրդ ա անում, տենում աշկերտը քնել ա, իրա տված ոսկիքն ու անգին քարերն էլ ճրեն զաղցյահի վրեն: Թագավորը էս որ տենում ա, ուսուզով, ոտի մանների վրա մննում ա նեքսե, ա՛ռ հա դրան մի լա՛վ սիլլա: Տալիս ա ու զուս գալի ծըլկվում:

Աշկերտը վախլությունիցը վեր ա թոնում, տենում մարդ չկա:

— Ա՛յ անաստոծ, — ասում ա, — խի՞ չիր թողում իմ մուրա-զին հասնեի. ի՛նչ ասեմ, ինձ սիլլա տվող, ոնց որ զու մուրազս փորիս թողիր, բարով դու էլ քու մուրազին շհասնես:

Էս խոսքը թագավորը լսում ա, համա, որ ասես, ձեն-ծառողն  
չի հանում. թողում ա գալի ամարաթը: Կանչում ա իրա նոքար-  
ներին:

— Էս սհաթին,— ասում ա,— կէթաք ֆլա՛ն զարգյարի աշ-  
կերտին կկանչեք, կբերեք իմ կուշտը:

Նոքարները գլուխ են տալի, էթում էթում են զարգյարի դու-  
քանը:

— Ուստա,— ասում են,— թագավորը քու աշկերտին կան-  
չում ա:

Զարգյարը մնում ա արմացած:

— Քա՛նըմ, գյո՛ղըմ,— ասում ա,— ախար թագավորը իմ աշ-  
կերտի հեննա ինչ բան ունի, յանդիշը ընկած կըլնեք, բալքի ինձ  
ա ուզե:

— Չէ՛, ո՞ւստա,— ասում են նոքարները,— հենց քու աշկեր-  
տին ա կանչե:

— Դուք գիտաք,— ասում ա զարգյարը,— հրեդ աշկերտը,  
հրեդ դուք. տանում եք՝ տա՛րեք:

Նոքարները աշկերտին աղաք են անում, բերում թագավորի  
կուշտը: Խեղճ աշկերտը մնացել էր գլխի վրեն մոլորած, վախլու-  
թյունիցը շէր իմանում ի՞նչ անի, ի՞նչ շանի. թագավորի ամարաթը  
մտավ թե չէ, ձեռները գոշին դրած օխտը հետ թագավորին գլուխ  
տվեց, ընդե կաննեց:

— Ֆլա՛ն զարգյարի աշկերտը դո՞ւ ես,— հարցրեց թագա-  
վորը:

— Հա՛, թագա՛վորն ապրած կենա, ես եմ,— ասեց աշկերտը:

— Ա՛յ տղա,— ասեց,— ա՛սա տենամ. ի՞նչ էր քու մուրազը,  
որ փորիդ թողի. ա՛սա, ես կատարեմ:

— Չէ՛, թա՛գավորն ապրած կենա,— ասեց աշկերտը,— իմ  
մուրազն ընենց բան ա, որ չեմ կարա ասի:

— Չե՞ս ասի, տե՛ս՝ կփոշմանես:

— Թա՛գավորն ապրած կենա, ի՞նչ ուզում ես՝ ա՛րա, արինս  
քեզ հալալ ա:

Թագավորը տենում ա, որ չէ, աշկերտը մի հետ պահին ա կան-  
նե, չի ուզում ասի, հրամայում ա իրա նոքարներին՝ տանեն քցեն  
մի մութը ֆորի մեջ, ֆորի բերանն էլ դայիմ կալնեն, բալի վա-

խենա, ասի: Նորարները խեղճ տղին ծեծելոն, ջարդելոն, բըսթ-բըսթելոն, բաշբաշելոն՝ տանում են քցում մի մութը ֆորի մեջ:

Էղ զշերը տղին մնում ա ֆորի միջին: Հեգսի օրը թագավորը հրամայում ա նորարներին, որ էթան էն տղին հանեն, բերեն: Էթում են հանում, բերում թագավորի կուշտը:

— Ա՛յ տղա, — ասում ա թագավորը, — ասսանից վախեցի, ա՛րի ինձ էրազդ ա՛սա: Որ ասես, իմաց կա՛ց՝ ի՛նչ ուղես, կտամ:

— Զէ՛, թագա՛վորն ապրած կենա, — ասում ա աշկերտը, — չե՛մ ասի, ի՛նչ ուղում եմ՝ ա՛րա:

— Տարեր դրան էլ եղ զցեք ֆորը, — հրամայում ա թագավորը, — բալի ընդե խելթը գլուխը գա:

Նորարները ծեծելոն, բաշբաշելոն տանում են յա՛լլա՝ գըրըմ-փակին էլ եղ քցում ֆորի մեջ:

Խեղճ տղին սոված, ծարակ մնում ա ֆորի միջին մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՛ մի շարաթ, տենում ա ֆորի բերանը բաց անող շկա: Վերջը միտք ա անում՝ գետինը փորի, բալի մի ծակ գտնի, ընդիան դուռ գա, փախնի: Մի փետի կտոր ա գտնում ֆորի միջին. Էղ փետի կտորը վեր ա ունում ու յավաշ-յավաշ ֆորի մի դհիցը քանդում: Թանդում ա, քանդում ա, քանդում ա, մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, տենում ա զամշներ էրկաց. մի էրկու թիզ էլ քանդում ա, տենում, բհ՛, մի ծակ բաց էլավ աղաքին:

— Էս լավ էլավ, — ասում ա, — հմի էս ծակը լենացնեմ, որ անցկենամ էն դի՞ը, տենամ ի՛նչ կա, ի՛նչ շկա:

Թանդում ա, քանդում ա, էնքամ քանդում ա, որ տենում ա էղ ծակովը կարա անցկենա, նոր զայիշը միջիցը եղ ա անում, նրա մի տուտը ընդե մի տեղան բանդ անում, մեկել տուտը բռնում ա ու սրլլալին վե գալի ներքեւ: Վեր ա գալի ի՛նչ տենում՝ մի օթախն թամուզ ավլած, սարքած, միջին մի տախտ գրած, տախտի վրեն մի ձեռք խաս տեղաշոր քցած, մի սի՞րուն, նա՛խշուն, հորի-մալաք աղջիկ էլ էղ տեղաշորի միջին քնած ա. էնքա՛մ սիրուն, էն-քա՛մ նաշխուն, որ շուտես, շմմես, շհագնես, շմաշես, հենց նրա դյուշ-շամալին թամաշ անես<sup>2</sup>: Սրան որ շի տենում, խելքամաղ ա

<sup>1</sup> Տպագիր տերսում այս բառը բանահավաքի ձեռքով չնշված է (Ա. Կ.):

<sup>2</sup> Տպագիր տերսում հաշորդում է՝ «էնշամ մի սիրունիկ զագ էր», որը չնշված է բահտհավաքի ձեռքով (Ա. Կ.):

ըլնում, մնում: Դե՛ս, դե՛ն ա մտիկ տալի, տենում մի պուճախին էլ մի ոսկե սինի՝ մեջը լիքը փլավ, մի զաղ էլ տապակած, փլավի գլխին դրած: Նա էլ զաթի էսթավուր բանի էր ման զալի: Վրա ա պրծնում, կուշտ ու կուր փլավն ուտում, բերանը սրբում, էն զի՞ը կանում: Ենա էթում ա աղջկա էրկու թուշը զայիմ պաշում, նոր զայշի տուտը բռնում, բանձրանում էլ եղ իրա տեղը: Դու մի ասի՝ էդ աղջիկը հենց թագավորի աղջիկն ա ըլնում:

Էդ աղջիկն ա՝ մի վախտ զարթնում ա, վե կենում տենում իրա փայ փլավը կերել են. Հայլու մեջն ա մտիկ տալի, տենում էրեսի վրեն լաքա կա:

— Կա չկա,— ասում ա,— ըստե մարդ ա մտե, համ իմ փայ փլավն ա կերե, համ էլ ինձ պաշե, թողե գնացե:

Դե՛ս ա ընկնում, դե՛ն ա ընկնում, է՛ս պուճախը, է՛ն պուճախը, տենում ա մարդ-մադաթ չկա, դուռն էլ զայիմ շինած ա: Մնում ա արմացած, շի իմանում էս ի՛նչ բաս ա:

Էզսի օրը աշկերտն էլ էդ վախտին ֆորի միջիցը էն ծակը բաց ա անում, վե գալի թագավորի աղջկա օթախը, տենում ա էլի քնած ա. Էթում ա նստում, անսաս նրա փայ փլավն ուտում, ենա մոտանում ա աղջկա զուխտ թուշը պաշում, հենց ուզում ա էթա՝ աղջիկը նրա փեշը զայիմ բռնում ա:

— Ա՛յ տղա,— ասում ա աղջիկը,— օձն իրա պորտուլը, զուշն իրա թևովը ընչանք օրս սիրտ շի արե ըստե ոտ դնի, զու ո՞նց սիրտ արիր մտար իմ օթախը: Ոնց ես՝ էթամ հորս ասեմ, էն սհաթին քեզ քյալլա անիլ տա:

— Թագավորի աղջիկը սաղ ըլնի, — ասում ա տղեն, — քու սերն ա բերե, Թանց հորդ ես ասում, — ասում ա, — հազիր զու քու ձեռովը քյալլա ա՛րա, պրծի էլի:

Էս խոսքը շատ ա դիր զալի՛ աղջկանը:

— Բաս որ ըտենց ա, — ասում ա, — սրանից զենք ես քունն եմ, զու իմը՝ Ռազի՛ ես:

— Ռազի՛ եմ, — ասում ա տղեն:

Նոր թաղաղան էրկսով նստում են հացի. ուսում են, խմում, քեֆ անում, ջա՛ն ասում, ջա՛ն լսում ընչանք դառը կեսզշեր: Ենա տղեն վեր ա կենում էթում էլ եղ իրա տեղը, ծակը զայիմ կալնում, որ մարդ շիմանա:

Հսենց անցկացավ մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս. էս

աղեն ամեն զշեր էն ծակովը վեր էր գալի թագավորի աղջկա օթախը, նրա հեննա ուտում, խմում, ասում, խոսում, մասլահաթ անում, նոր լիսադեմին էլ եղ գալի իրա տեղը:

Օրեն մի օրը թագավորը հրամայեց իրա նոքարներին՝ էթան տեսան զարգլարի աշկերտը մեռել ա, թե դեռ հլա սաղ ա, հանեն, բերեն իրա կուշտը: Նոքարները գնացին ֆորի բերանը բաց արին, պարանը կախ տվիին, էն տղին ֆորիցը հանեցին, բերին թագավորի կուշտը: Թագավորը տղին որ. տեհավ, մնաց արմացած: Զաղությունիցը տղի շինքը էնքամ էր հաստացե, կասենաս գոմշի շլինք ըլներ:

— Հը՝,— ասեց թագավորը,— էրաղդ ասո՞ւմ ես, թե չէ:

— Չէ՝, թագա՛վորն ապրած կենա,— ասեց տղեն,— իրեք ամիս չէ, թեկուղ իրեք տարի էլ պահես ֆորի միջին, ես իմ էրաղն ատողը չեմ:

— Ա՛յ տղա, — ասեց թագավորը,— մեղք ես, շահել-շիվան ես. տե՛ս՝ վերջը կփոշմանես:

— Թագա՛վորն ապրած կենա, չեմ փոշմանի, ի՛նչ ուզում ես՝ ա՛րա:

Թագավորը հերսոտեց տղի վրեն, նոքարներին հրամայեց, տանեն էլ եղ քցեն ֆորի մեջը; որ ընդե սովածությունիցը մեռնի: Նոքարները ծնծելոն, շարդելոն, քաշքելոն տանում են նրան էլ եղ քցում ֆորի մեջը, թողում գալի:

Զարգյարի աշկերտն էլ զաթի էս էր ուզում: Աղաքա պես ասսու իրան օրը զշերը կախ էր ընում աղջկա օթախը, ընչանք լիսադեմ կշտին մնում, ուտում, խմում, կշտանում, նոր լիսադեմին բանձրանում էլ եղ իրա տեղը:

Հսենց անց ա կենում մի ժամանակ. օրեն մի օրը Ֆրանգոստումի թագավորը էդ երկրի թագավորին իրեք ձի աղկում, հետն էլ թամբահ անում, թե. «Պատի իմանաս սրանց ամեն մնի յաշը՝ ո՛ր ձին քա՛նի տարեկան ա. շիմացար, իմաց կաց քու սաղ թագավորությունը քարուքանդ կանեմ, դու զիտասա»:

Խեղճ թագավորը էս որ լսում ա, թուք ու մուքը կպնում ա, զախլությունիցը չի իմանում ի՛նչ անի, ի՛նչ շանի, ի՛նչ զուղաք տա նրան:

Միտք արեց, միտք արեց, վերջը ասեց.— Թե իմանա՝ իմ աղշիկը կիմանա էս բանը, էլ մարդ չէ:

Էն սհաթը ղարավաշների բերնովը խաբար ղրկեց աղջկանը, թե՝ ըսե՞նց, ըսե՞նց, ըսե՞նց բան. Ֆրանգստումի թագավորը իրեք ձի աղրկե, պատի նրանց յաշը իմանաս: Դե նրա աղջիկը իմաստում էր, է՛լի, ամեն բան գիտար, համա մախսուս շասեց. հորը ջուղար ղրկեց, թե իրա իմաստունությունը գնացել ա, թող ուրշին հարցնի: Ղարավաշները խաբար բերին թագավորին, թե աղջիկը ըսենց ա ասում:

Էդ իրիկում զարգյարի աշկերտը, ոնց որ իրա ղայդեն էր, է՛լի ֆորի միջիցը կախ ա ըլնում թագավորի աղջկա օթախը:

— Տղա՛,— ասում ա թագավորի աղջիկը,— բա չես ասի՝ ըսե՞նց, ըսե՞նց, ըսե՞նց բան: Ֆրանգստումի թագավորը հորս իրեք ձի աղրկե, հետն էլ ապսպրե, թե՝ «Պտի իմանաս ո՛ր ձին քա՞նի տարեկան ա»: Նա էլ ղարավաշների բերնովը իմաց էր տվե ինձ, որ էթամ մի ճար անեմ նրան: Ես էլ մախսուս խաբար ղրկեցի, թե իմ իմաստունությունը գնացել ա, թող ուրշին հարցնի, որ ինչ ա՝ քե սարգացնեմ, էթաս գտնես, բալի էդ ֆորիցը քեզ աղատի:

— Էդ լավ էլավ,— ասում ա տղեն,— դե սարվացրա տեհա՛մ:

— Կէթաս,— ասում ա աղջիկը,— էդ ձիանքանցը աղաք կա-նես, քու ձեռովը կտանես աղրուրը, կշրես, եննա կրերես դոմը, կկապես, աղաքները գարի կածես, որ ուտեն. որը դունչը կոխեց մսուրքը, եմը կերավ՝ իմաց կա՛ց էն իրեք տարեկան ա. որը եմին դնչով տվեց ու ֆոնշացրեց՝ իմաց կա՛ց ըն էլ էրկու տարեկան ա. որն էլ տեհար դունչը կոխում ա մսուրքը ու ըսկի գարի շի ուտում, հենց դե՛ս, դե՛ն ծով ա ըլնում, տոճինկ տալի՝ իմաց կա՛ց, որ էն հլա խամ ա, եմին չի սարվե, ըն էլ մի տարեկան ա:

— Լա՛վ,— ասում ա տղեն,— ոնց որ ասեցիր, ընենց էլ կանեմ:

Սրանց թողանք ըստե, գանք խաբար տանք թագավորիցը:

Էդ թագավորն ա ղարավաշներիցը որ իմանում ա աղջկա շուղաբը, մնում ա շիվարած, գլխի վրեն մոլորած, չի իմանում՝ ի՛նչ անի, ի՛նչ խաբար ղրկի Ֆրանգստումի թագավորին: Կանշում ա իրա նազիր-վեղրին, պալատի մարդկերանցը քոմմըքին էլ հա-վաքում ա, բալի մի ճար անեն: Սրանք դե՛ս տվին, դե՛ն տվին, ինչքամ խելք-խելքի տվին, միտք արին՝ զադ գուս չէկավ, չկա-քացին գտնի:

Բիրդան թագավորի միտն ընկավ զարգլարի աշկերտը, առեց.— Մարդ ա, բալի նա գտնում ա:

Հրամայեց էթան ֆորիցը հանեն, բերեն իրա կուշտը: Էն սհաբը էթում են հանում, բերում: Տղեն գալիս ա թագավորին գլուխ տալի, ընդե կաննում:

— Տղա՛, — ասում ա թագավորը, — քեզ մի բան եմ ուզում հարցնի, չեմ գիտա կդանես, թե չէ:

— Հարցրա՛, թագա՛վորն ապրած կենա, — ասում ա տղեն, — բալքի գտնում եմ:

— Թե իմացար էս իրեք ձիու յաշը, — ասում ա, — ինչ ուզես՝ կտամ:

— Թագա՛վորն ապրած կենա, — ասում ա տղեն, — դրանում ի'նչ կա, որ շիմանամ:

— Դե իմացի տենա՛մ, — վրա ա բերում թագավորը ուրախացած:

Տղեն էրեկվա տված խրատը մտիցը չէր քցի: Էն սհաթը ձիանոնց նոխտերն առավ ձեռը, քաշեց, տարավ դպա աղբուրը, լավ-լազաթին շրեց, լեղացրեց, եղ բերեց գոմումը կապեց: Եննա գնաց գարի բերեց, ածեց աղաքները, որ ուտեն, ինքն էլ մխելի հեռու կաննեց, որ վարավուրդ անի, տենա ոնց են ուտում: Տեհավ, որ ձիանոնցից մինը, աղջկա ասածի պես, գլուխը կոխեց մսուրքը ու արխեյին իրա եմն ուտում էր: Տեհավ էն մինն էլ մոտացավ գարուն, համա յա ուտում էր, յա չէ, յա թե չէ ֆոնչացնում էր: Համա վրա իրեք ձին, որ, ասես, գարի չէր ուտում՝ յա դե՛ս, դե՛ն էր ծով րլնում, տոճինկ տալի, յա թե չէ քացի քցում, խալխին վախացնում: Ըստօնք որ լավ վարավուրդ արեց, մոտացավ թագավորին:

— Թագա՛վորը սաղ ըլնի, — ասեց, — հրես էս ձին տենում ես, էս իրեք տարեկան ա. էս մինը էրկու տարեկան. էն մեկելն էլ՝ մի տարեկան ա: — Մին-մին մատով շանց տվեց:

Յրանգստոնի թագավորի մարդիկը, թագավորի նազիր-վեղիրը քոմմա մնացին մաթ էլած, բերանները բաց իրար էրեսի մտիկ անելոն: Թագավորի ուրախությունին հո հեսար չկար. չէր իմանում ի'նչ անի, ո՞նց աշկերտի լավությունի տակիցը գուս գա, որ լավ ըլնի: Համա բիրդան նրա էրազը միտն ընկավ: Թագավորը աղաշանք-պաղատանք արեց, որ ասի, նա էլի սատանի ձին նի էլավ, շասեց: Թագավորը հրամայեց, որ էլ եղ տանեն քցեն ֆորը.

ընդե կենա ընշանք խելքի գալը։ Նոքարները տարան զարգյացի աշկեռտին է։ Եղ քցեցին Փորը, թողին էկան։

Թագավորը Ֆրանգստունի թագավորի մարդկերանց հենաւ լավ-լավ փեշտաշներ դրեց, ճամփու քցեց։

Անց ա կենում ըսենց մի վախտ, մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս, օրեն մի օրը Ֆրանգստունի թագավորը էս թագավորին իրեք խնձոր ա դրկում, իրեքն էլ մի տեսակի, մի ուանդի ու մի մենծությունի. ապսարում ա, թե. «Պտի իմանաս էս իրեք խնձորից ո՛րը քա՞նի տարվա ա. շիմացար՝ իմաց կա՛ց սաղ թագավորությունդ քառուքանդ կանեմ, քեզ էլ տնով-տեղով եսիր կտանեմ»։

Թագավորը էլի զարավաշների բերնովը իմաց ա տալի իրա աղջկանը, թե. — Ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան. կարաս՝ մի իլլա՛ն արա: — Աղջիկը էս հետ էլ ա խարար դրկում հորը, թե՝ իրա իմաստությունը գնացել ա, թո՛ղ ուրիշ մարդ գտնի:

Էդ իրիկուն զարգյարի աշկերտը, ամեն օրվա պես, էլի կախ ա ըլնում թագավորի աղջկա օթախը՝ Աղջիկը սրան նազլ ա անում։

— Բա չես ասի, — ասում ա, — ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան: Ֆրանգստունի թագավորը հմի էլ իրեք խնձոր ա դրկե հորս, որ իմանա նրանցից ամեն մինը քա՞նի տարվա խնձոր ա. «Զիմացար, — ասել ա, — իմաց կա՛ց սաղ թագավորությունդ քարուքանդ կանեմ»։ Հերս էս հետ էլ էր ինձ կանչե, որ էթամ մի ճար անեմ, համա ես զաստի շգնացի, որ էլի քեզ կանչի, էթաս գտնես։

— Բա է՞դ ոնց պլտի գտնեմ, — հարցնում ա տղեն։

— Խնձորները, — ասում ա, — վե կոմես ձեռդ, կէթաս հավզի դրադին կկաննես, մին-մին կցցես ջուրը. էն որ զնաց ջրի տակը ու եղի էլավ ջրի էրեսը, իմացի, որ մի տարվա ա. էն որ քցելու բոշտան մի քիչ տակն էլավ, էլ եղ դուս էկավ ջրի երեսը, իմացի, որ էրկու տարվա ա. համա էն որ ըսկի ջրի տակը չի էթա, հենց կմնա էրեսին, իմացի, որ ըն էլ իրեք տարվա ա:

— Լա՛վ, — ասում ա տղեն, — ոնց որ ասեցիր, ընենց էլ կանեմ։

Սրանց թողանք ըստե, գանք խարար տանք թագավորիցը։

Թագավորին որ խարար են բերում, թե աղջիկդ ըսենց ա ասում, էն սհաթը հրամայում ա նոքարներին, էլի էթան զարգյարի աշկերտին փորիցը հանեն, բերեն: էթում են հանում, բերում. թագավորի կուշտը: Տղեն թագավորին զլուխ ա տալի, ընդե կաննում։

— Տղա՛, — ասում ա թագավորը, — քեզ մի բան էլ պտի հարց-  
նեմ, չեմ գիտա կզտնես, թե չէ:

— Ա՛սա, թագավորն ապրած կենա, բալքիմ գտնում եմ:

Թագավորը իրեք խնձորը քերում ա, տալի տղին:

— Կարա՞ս իմանա, — ասում ա, — էս խնձորներից ո՞րը քա՞նի  
տարվա ա:

— Թագավորն ապրած կենա, — ասում ա, — դրանից էլ հեշտ  
բա՞ն:

Տղին դե աղջկա խրատը միտն էր պահե, է՛լի: Խնձորներն առ-  
նում ա թագավորի ձեռիցը, էթում հավզի զրազին կանում, մին-  
մին քցում ջուրը: Տեսնում ա, ոնց որ աղջիկն ասել էր, ընենց էլ  
էլավ: Ըսենց մին-մին որ քցեց, իմացավ ո՞րը քա՞նի տարվա ա,  
ջկեց, տվեց թագավորին:

— Թագա՛վորն ապրած կենա, — ասեց, — էս մի՛ տարվա խըն-  
ձոր ա, էս՝ է՛րկու տարվա, ըս էլ՝ ի՛րեք տարվա:

Ֆրանգստումի մարդիկը, թագավորի նազիր-վեղիրը մնացին  
արմացած, թե՛ էս տղեն ի՛նչքամ իմաստում, ի՛նչքամ խելոք ա,  
որ ըս էլ էրկու հետ էսթավուր դժար բանը գտնում ա: Թագավորը  
հո՛ ուրախացե, աշխարով մին էր էլե, ուզում էր դրան լավ-լավ  
փեշքաշներ տա, մուրախաս անի, բիրդան էլի<sup>1</sup> նրա էրազը միտն  
ընկավ:

— Տղա՛, — ասեց թագավորը, — քեզ ուզում եմ բաց թողամ  
էթաս, քու արեի ձենն ածես. արի գոքիդ քարը վե՛ր ածա, ասա  
տենամ էրազդ ի՛նչ ա:

— Թագա՛վորն ապրած կենա, — ասեց տղեն, — բան գիտաս՝  
բան ա՛սա. ևս էրազ ասողը չեմ:

Թագավորը տեհով, որ չէ, շիլնում, էրազը չի ասում, էլի կոշտ  
ու կոպիտ ջուղար ա տալի, հրամայեց որ տանեն էլ եղ քցեն ֆորի  
մեջը, բալքի ընդե խրատվի, խելքի գա: Նոքարները տղին քաշքշե-  
լոն տանում են էլ եղ գցում ֆորի մեջը, վե կենում գալի:

Թագավորը Ֆրանգստումից էկած զոնազներին լավ-լավ փեշ-  
քաշներ ա տալի, ճամփու զնում իրանց երկիրը:

Անց ա կենում ըսենց մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս, վեց  
ամիս, մախլասի՝ մի տարի, Ֆրանգստումի թագավորը էլ մարդ չի

<sup>1</sup> Տպազիր տեքստում այս բառը բացակայում է, ավելացված է բանա-  
հավաքի ձեռքբուլ (Ա. Կ.):

ղրկում էս մեր թագավորի կուշտը: Սա էլ ուրախանում ա, հենց իմանում ա՝ պրծավ նրա ձեռիցը, Համա ո՛րդէ. օրեն մի օրը մըն էլ ի՞նչ ա տենում՝ Ֆրանգստումի թագավորը հրես տասնէրկու էրեխա ա ղրկե, տասնէրկուան էլ մի բոյի, մի բուսաթի. էնքա՛մ իրար նման, էնքա՛մ իրար նման, կասենաս տասնէրկուան էլ աղպրտինը ըլնեին, մի հորից, մի մորից. մի խոսքով՝ ոնց որ մի խնձորը տասնէրկու տապակ արած, ընդե ղրած, էնքա՛մ իրար նման ին. թամբահ ա անում, թե. «Պտի իմանաս սրանցից ո՛րն ա աղջիկ, ո՛րը տղա. շիմացար՝ իմաց կա՛ց ղոշում վե կունեմ, կգամ թախտդ տափու տարաղ կանեմ»:

Խեղճ թագավորի թուք ու մուքը կպավ: Զէր իմանում ի՞նչ անի. ի՞նչ վայ տա գլխին: Ծարը կտրած, էլի զարավաշներին ղրկեց իրա աղջկա կուշտը, որ գա տենա ի՞նչ ա անում, Ֆրանգստումի թագավորի ջուղարը ո՞նց ա տալի:

Համա աղջիկը էլի զուկը տակը շտվեց, խաբար ղրկեց, թե.— էդ իմ բանը չի, քեզ հմար ուրիշ մարդ գտի:

Որ մթնում ա թե չէ, զարգայարի աշկերտը ֆորիցը քաշ ա ըւնում թագավորի աղջկա օթախոր, աղջիկը դրան ասում ա.— Բա չես ասի՝ ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան, Ֆրանգստումի թագավորը տասնէրկու էրեխսա ա ղրկե հորս, որ իմանա նրանցից ո՛րն ա աղջիկ. ո՛րը տղա: Հերս էլ զարավաշներին ղրկել էր ինձ կանչե, որ էթամ Ֆրանգստումի թագավորի ջուղարը տամ. ես էլի մախսուս շդնացի, ասեցի. «Իմ բանը չի»:

— Բա է՞դ ոնց պտի գտնեմ,— հարցնում ա տղեն:

— Կէթաս,— ասում ա աղջիկը,— իբրուզը տաք ջուր կլցնես. գշերով-գշերհանա հաշտումը կկաննես: Էն տասնէրկու էրեխսեն որ վե կկենան էրեսները լվանան, կէթաս ձեռներին ջուր կածես: Ջուր ածելու վախտը ով տեհար տաքին չդիմացավ, ձեռը քաշեց ու ոօ՛ֆ-օ՛ֆ» արեց, իմաց կա՛ց նա տղա ա. ով ձեռը շքաշեց, տաքին ղիմացավ, իմաց կա՛ց նա աղջիկ ա: Ըսենց,— ասում ա,— մին-մին կըոկես, տղեքանցը ջոկ օթախ կանես, աղջկերանցը՝ ջոկ: Նոր Ֆրանգստումի թագավորի մարդկերանցը կկանչես, կասես. «Էս վեցը տղա են, մեկել վեցը՝ աղջիկ»:

— Լա՛վ,— ասում ա տղեն,— ոնց որ ասեցիր՝ ընենց էլ կանեմ:

Սրանց թողանք ըստե, գանք խաբար տանք թագավորիցը:

Դարավաշները թագավորին որ խաբար քերին, թե՝ ազջիկդ  
ըսենց ա ասում, խեղճը մնաց գլխի վրեն մոլորած հ'նչ աներ, ի'նչ  
շաներ. ո'ւմ կանչեր, որ կարենար իրա դարտին դարման անի:  
Միտք ա անում, միտք ա անում, վերջը հրամայում ա՝ էթան էլի  
դարդյարի աշկերտին կանչեն: էթում են ֆորիցը հանում, քերում  
թագավորի կուշտը: Տղեն թագավորին գլուխ ա տալի, էն դի՞ը  
կաննում:

— Տղա՛,— ասում ա,— Ֆրանգստունի թագավորը հմի էլ ըսենց  
մի զուզում ա ապսպարե. տե՛ս կարա՞ս գտնի:

— Խի՛ շեմ կարա, թագա՛վորն ապրած կենա,— ասում ա  
տղեն, — դրանից էլ հեշտ բա՛ն: Համա, թագա՛վորն ապրած կենա,  
ես էլ քեզանից մի բան պտի ուզեմ. շեմ գիտա՛ կտա՞ս, թե չէ:

— Ուզա՛,— ասում ա թագավորը, — մի՛ վախի, սաղ թագա-  
վորությունս էլ ուզես, շեմ խնայի՛ կտամ:

— Թագա՛վորն ապրած կենա, — ասում ա, — լսել եմ մի սի՛-  
րուն, մի նա՛շխուն, մի հուրի-մալաք աղջիկ ունես, որ Ֆրանգս-  
տունի թագավորի ուզածը գտնեմ, էդ աղջիկն էլ ինձ տա՞լիս ես:

— Տալիս եմ, — ասում ա թագավորը, — մորդ կաթի նման քեզ  
հալալ աւ:

— Տա՞լիս ես:

— Տալիս եմ, — ասում ա թագավորը:

— Բաս որ ըսենց ա, — ասում ա տղեն, — Ֆրանգստունի թա-  
գավորի ուզածն էլ զուխտ աշքիս վրեն:

Էզսի օրը, լիսանում ա թե չէ, տղեն իրրուղը տաք ջուր ա լըս-  
նում, մի ձեռին բռնում, լազանն էլ մեկել ձեռն ա առնում, փեշ-  
կիրն էլ ուսովը քցում, գալի հաշտումը կաննում: Թագավորի զո-  
նազները վեր են կենում տեղներիցը, դուս գալի հաշտը, որ էրես-  
ները լվանան, տղեն աղաք ա գալի, մին-մին ձեռներին ջուր ածում:  
Ով որ տաքին չի դիմանում, ձեռը քաշում ա ոօ՛ֆ-օ՛ֆ» անում,  
նրան ջոկ օթախ ա անում. ով որ չէ, տաքին դիմանում ա, թողում  
ա բնդե: Ըսենց քոմմքի ձեռին ջուր ա ածում, իրարից ջոկում, են-  
նա կանչում ա Ֆրանգստունի թագավորի մարդկերանցը:

— Է՛կեք, — ասում ա, — տեհեք դրո՞ւստ եմ ջոկե, թե չէ:

Ֆրանգստունի թագավորի մարդիկը գալիս են տենում՝ դրուստ  
ա յոկե. մնում են մաթ էլած էս տղի խելքի վրեն:

— Ա'ֆֆարիմ,— ձեն են տալի Ֆրանգստունի մարդիկը,— դրուստ ես չոկե:

Թագավորը բերում ա դրանց լավ-լավ փեշքաշներով ճամփու զնում դպա Ֆրանգստուն, Եննա թաղարեք ա տենում, բերում աղ-ջըկանը զարգայրի աշկերտի վրեն նշան զնում, պսակում, օխտն օր, օխտը գշեր հարսանիք անում:

Ինչ քե՛ֆ, ինչ ուրախությո՞ւն, ինչ դափ ու դուռնա՛, որ էլ հալ ու հեսար չկար:

Մրանց թողանք ըստե, գանք խարար տանք Ֆրանգստունի թա-գավորի մարդկերանցիցը:

Նրանք էթում են, էթում են, շատն ու քիչն աստոծ գիտա, հասնում են իրանց երկիրը: էթում են դուզ թագավորի ամարաթը, թագավորին գլուխ տալի, ընդի կաննում:

— Հը՛,— հարցնում ա թագավորը,— ի՞նչ չուզար եք բերե էն երկրի թագավորիցը:

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում են,— նրա երկրում մի ջահել-ջիվան տղա կա, էնքա՛մ խելոք, էնքա՛մ իմաստուն, որ էլ շենք կարա ասի. ըս էլ իրեք հետ ինչ հարցնում ես՝ նա՛ ա գտնում:

— Բաս որ ըտենց ա,— ասում ա թագավորը,— կէթաք էլ եղ էն երկիրը, իմ անումը կտաք, էն տղին վե կունեք, կրերեք իմ կուշտը, կասեք. «Մեր թագավորը քեզ կանչում ա»: մի տենամ էդ ի՞նչ թագուր իսան ա, որ ըս էլ իրեք հետ իմ ասածը գտնում ա:

— Մեր աշքի վրեն, թագա՛վորն ապրած կենա,— ասում են նրա մարդիկը:

Թագավորին գլուխ են տալի, դուս գալի, էթում ճամփի թա-գարեք տենում, հեգսի օրը, դեռ լիսն ու մութը շրաժանված, ընկ-նում ճամփա դպա էն թագավորի երկիրը:

Էթում են, էթում են, էթում են, շատն ու քիչն աստոծ գիտա, գշեր, ցերեկ էթում են՝ մի օր, էրկու օր, իրեք օր, մի շարաթ, էր-կու շարաթ, մախլասի՛ մի ամիս, հասնում են էն թագավորի եր-կիրը: Էթում են թագավորին գլուխ տալի, ընդի կաննում:

Թագավորը սրանց որ չի տենում, թուք ու մուքը կպնում ա, ասում ա. «Հալբաթ Ֆրանգստունի թագավորը էլի թազա բան ա ապսպե»:

— Հը՛, խե՛ր ըլնի,— հարցնում ա թագավորը նրանց:

— Թագա՛վորն ապրած կենա, — ասում են նրանք, — մեր թագավորը քու էն իմաստուն մարդին կանչում ա:

Թագավորը էն սհաթը մարդ ա զրկում զարգյարի աշկերտին ևնուցը, կանչիլ տալի: Զարդյարի աշկերտը դալիս ա թագավորին զլուխ տալի, ընդե կաննում:

— Տղա՛, — ասում ա թագավորը, — Ֆրանգստումի թագավորը բեղ կանչել ա, կէ՞թամ:

Խեղճ տղի ջանը եռ ու քորն ընկնում ա. էթա՛ վայ թե մի բան հարցնի, չկարենա ջուղաբ տա, զլուխը թոցնիլ տա. չէթա՛ վա՛յ թե հերսոտի, ղոշում վեր ունի, գա վրները կոիվ. Ըսենց մնացել էր էրկու շրի արանքին, չըր իմանում ի՞նչ անի, ի՞նչ չանի: Վերջը որ շատ միտք ա անում, միտք ա անում, տենում ա՝ ճար, իլլաճ չկա, պտի էթա:

— Թագա՛վորն ապրած կենա, — ասում ա, — որ հրամայում ես՝ կէթամ, ի՞նչ անեմ:

Էս տղեն ա՝ մի քանի օր մնում ա, ճամփի հմար պաշար ա վեր ունում, զի կենում նրանց հենա ճամփա ընկնում դպա Ֆրանգստում:

Գալիս են, գալի, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, մախասի՛ մի ամիս, հասնում են Ֆրանգստում: Թագավորի մարդիկը տղին աղաք են անում, տանում դուզ թագավորի ամարաթը, թագավորին զլուխ տալի, ընդե կաննում:

— Թագա՛վորն ապրած կենա, — ասում են, — հրես էն իմաստուն տղին բերել ենք:

— Ֆլա՛ն տղեն զո՞ւ ես, — հարցնում ա թագավորը:

— Հա՛, ես եմ, թագա՛վորն ապրած կենա, — ասում ա տղեն:

— Դե, որ ըտենց իմաստուն ես, — ասում ա, — ա՛ռ էս պողաւտի կտորը, ինձ հմար սրանից մի լավ ձեռք մախմուրի պես կակող շոր կարա՛, որ հագնեմ: Իրեք օր էլ քեզ վադա եմ տալի, — ասում ա, — կարեցիր՝ աղջիկս քեզ կտամ, վրհն էլ բոլ մալ ու դոլ վաթ. շկարեցիր՝ իմաց կա՛ց զլուխդ կֆը՛ռուա:

Խեղճ տղեն էս որ լսեց, լեղին ջուր կտրեց: Ճարն ի՞նչ. մի հետ ընկել էր, պտի քաշեր: Պողպատի կտորը վե կալավ, դառը-տխուր դուս էկավ, զնաց: էդ թագավորի աղջկա փանչարի կշտովը անց-

կենալիս, թագավորի աղջիկը դրան վարավուրդ արեց. գլուխը փառ-  
ջարիցը հանեց, տղի հեննա խոսաց:

— Ֆլան իմաստում տղեն դու ես, — հարցրեց աղջիկը:

— Հա՛, ես եմ, թագավորի աղջիկը սաղ ըլնի, — ասեց տղեն:

Տղեն որ գլուխը լի բանձրացնում, մտիկ տալի, տեսնում ա-  
ի՞նչ, մի աղջիկ, մի աղջիկ, մի աղջիկ, էնքա՞մ սիրուն, էնքա՞մ  
նաշխուն, որ շուտես, շմմես, շհագնես, շմաշես, հենց նրա գյուլ-  
քամալին թամաշ անես, էնքա՞մ մի սիրունիկ զադ էր. Դրան որ չի  
տեսնում, խելքամաղ ա ըլնում, մնում:

— Թա խի՞ ես ըտենց դառը-տխուր, — հարցրեց աղջիկը:

— Ի՞նչ անեմ, տխուր շըլնեմ, — ասեց տղեն, — Հերդ ինձ մի  
պողպատի կտոր ա տվե, որ իրա հմար մի ձեռք շոր կարեմ. շկա-  
րեցի՝ պտի գլուխս կտրի տա: Հմի մնացել եմ մոլորած, շեմ իմա-  
նում ի՞նչ անեմ, ի՞նչ շանեմ:

— Տղա՞, — ասեց աղջիկը, — մի՞ վախի, ես ընենց կանեմ, որ  
քու մի մազն էլա չի թեքվի: Կէթաս, — ասեց, — աղլուխսդ լիքը ավաղ  
կլցնես, կտանես հորս կուշտը, կասես. «Թագավորն ապրած կե-  
նա, էս ավազիցը թել մանիլ տու, որ քու ուզած մի ձեռք շորը  
կարեմ»: Որ կասի. «Ախար ավազիցը թել կմանվի՞»: Կասես.  
«Ավազիցը որ թել չի մանվի, բա պողպատիցը շոր կկարվի՞»:

Տղեն էս որ լսում ա, ուրախանում, աշխարով մին ա ըլնում:  
Էն սհաթն էթում ա աղլուխսը լիքը ավաղ լցնում, եդ գալի թագա-  
վորի ամարաթը, թագավորին գլուխ տալի, ընդե կաննում:

— Հը՞, տղա՞, — հարցնում ա թագավորը, — խի՞ եդ էկար:

— Թագավորն ապրած կենա, — ասում ա, — էս ավազը բե-  
րել եմ՝ մանիլ տաս, որ քու ուզած շորը սրանով կարեմ:

Թագավորը մնում ա սառած, տղի էրեսին մտիկ անելոն:

— Հը՞, թագավորն ապրած կենա, — վրա ա բերում տղեն, —  
խի՞ ես ըտենց էրկեն ու բարակ միտք անում:

— Ո՞նց միտք շանեմ, — ասում ա թագավորը, — ըսկի էդ ըլ-  
նելու բա՞ն ա, որ ասում ես: Ավազիցը թել կմանվի՞»:

— Ավազիցը որ թել չի մանվի, — ասում ա տղեն, — բա պող-  
պատիցը շոր կկարվի՞»:

Թագավորը տղի խելոք ջուղաբը որ լսում ա. — Տղա՞, — ասում  
ա, — դու տարար. աղջիկս մորդ կաթի նման քեզ հալալ ա, գնո-  
քու արկի ձե՞նն ածա:

Էս սհաթը բերեց աղջիկը տվեց տողին, աղջկա հեննա լավ բաժինք դրեց, լավ մալ ու գոլվաթով, լավ-լավ փեշքաշներով ճամփու դրեց իրա երկիրը:

Տղա, աղջիկ ճամփի թաղարեք տեհան, բեռները բարձեցին, զնացին թագավորի ձեռը պաշեցին, թագավորի կնկա ծիծը պաշեցին, ընկան ճամփա:

Էս տղեն ա՝ էկավ, էկավ, էկավ, մի օր, էրկու օր, իրեք օր-մի շարաթ, էրկու շարաթ, մախլասի՝ մի ամիս, հասավ իրանց երկիրը:

Խարարը տարան թագավորին, թե.—Հրեն փեսեդ եթա քոչ ու բարխանով գալիս ա, հեննեն էլ մի սի՛րուն, մի նա՛շլուն, մի հուրի-մալաթ աղջիկ, որ տենովի խելք ա էթում:

Թագավորը մենծ զոշուն՝ ա վեր ունում, իրա նազիր-վեպրի հեննա դուռ գալի փեսի աղաքը: Թագավորն ու տղեն իրար որ տենում են, ուրախանում, աշխարով մին են ըլնում: իրար հեննա վեր են կենում, գալի թագավորի ամարաթը: Նո՛ր ըստե ասում են, խոսում, մասլահաթ անում, տղեն իրա գլխով անցկացածն ա նազր անում, նրանք իրանց. ըսենց ուրախանում են, խնդում, ծիծաղում՝ ջա՛ն ասում, ջա՛ն լսում:

— Թագավորն ապրած կենա,— ասում ա տղեն,— ընշանք օրս իմ էրազը չի ասում, համա հմի պտի ասեմ:

— Ասա՛,— ասում ա թագավորը,— ասա՛ տեհնամ էդ ի՛նչ էրազ էր, որ ի՛նչ արի, շարի, ի՛նչ Հուդի շարշարանք տվի՛ շասեցիր:

— էրազում,— ասում ա,— տեհա մի լավ գյուլի բաղում նըստած եմ: Տեհա էդ բազի միջիցը էրկու սի՛րուն, նա՛շխուն, հուրի-մալաթ աղջիկ դուռ էկան ու դուռ՝ դպա ինձ: Դրանցից մինը քու աղջիկն էր, մեկելը՝ Ֆրանգստունի թագավորի աղջիկը: Էդ էրկու աղջիկը որ էկան իմ կուշտը, մինը մի ծնկանս նստեց, մինը՝ մեկել ծնկանս: Դե ջանել տղա, ջանել աղջկեք, սիրտս շհամբերեց, ձեռու քցեցի Ֆրանգստունի թագավորի աղջկա ճտովը, զովստ թուշը դայիմ պաշեցի, եդ դառա, որ քու աղջկա թուշն էլ պաշեմ, մըն էլ էն տեհա, շըրը՝ փ. մի սիլա էրեսիս: Մուրազս փորիս վե թուա, տեհա՝ ո՛նչ թաս կա, ո՛նչ համամ: Ես էլ, թագավորն ապրած կենա, դրա հմար ասեցի. «Ինձ սիլա տվող, ոնց որ իմ մուրազը փորիս թողիր, բարով դու էլ քու մուրազին շհամնես»: Թագավորն ապրած կենա,— ասում ա,— հրես էս էր իմ տեհած էրազը, որ ի՛նչ-

քամ շարշարեցիր, ի՞նչ արիր, շարիր՝ շասեցի։ Համա հմի ասում  
եմ, շունքի ես իմ մուրազին հասել եմ։

Թագավորն էս որ լսում ա, իրա թախտիցը վեր ա գալի, տղին  
նստացնում իրա տեղը թագավոր։

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասներ ձեր մու-  
բազին։

